

ԵՐԿՈՒ ՀՈԳԵՇԷՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նշանակալի օր մը եղաւ 15 Հոկտ. 2004 թուականը Իրաքահայութեան արդի պարամութեան մէջ: Այդ օրը երկու կարեւոր եւ ուրախալի միջոցառումներ միաբերել կարարութեան անսահման ներշնչում պարճառելով բոլոր անոնց, որոնք ներկայ կգտնուէին:

2003ի Ապրիլի 9էն ետք ստեղծուած կացութեան պարճառով, Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ դադրեցաւ Ս. Պարարագի մատուցումը, փոխարէնը՝ Ծերանոցի Ս. Կարապետ վանքը գործածելով Պարարագի եւ ծեսերու կարարման կեդրոն: Եւ ահա Իրաքահայ թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Աւագ արքեպիսկոպոս Աստուրեանի խոհեմ կարգադրութեամբ մատուցուեցաւ առաջին Սուրբ եւ անմահ Պարարագը յետ 18 ամսուայ դադարին: Պարարագիչը եղաւ նոյն ինքը առաջնորդ Սրբազան Հայրը:

Անմիջապէս Ս. Պարարագին յաջորդեց երկրորդ միջոցառումը: Երկար փարիներու փակումէն ետք՝ րեդի ունեցաւ Ազգային վարժարանի վերաբացումը: 1974 թուին նախկին պետութեան հրահանգով, Իրաքի մէջ գործող բոլոր ազգային դպրոցները պետականացուեցան, իր մէջ ըլլալով Հայոց Ազգային Վարժարանը: Այս վիճակը շարունակուեցաւ մինչեւ 2004 թ., երբ Սրբազան Հօր եւ Ազգ. Կեդր. Վարչութեան ջանքերով դիմումներ կարարութեան այժմեան պետական բարձրաստիճան պաշտօնեաներուն՝ արտօնութիւն ձեռք բերելու եւ ազգային դպրոցը վերստին բանալու համար, որը կարարութեամբ:

Բացման որոշումը օրը, ուսուցչական կազմը, նոր աշակերտութիւնը եւ անոնց ծնողները նախ մասնակցեցան Ս. Պարարագի Խորհուրդին Ս. Հաղորդութեան արժանանալով: Պարարագէն անմիջապէս ետք առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Կղերականաց դասը, Կեդրոնական Վարչութեան անդամները, Կրթական Յանձնախումբը, ուսուցչութիւնը, ծնողներն ու նոր աշակերտութիւնը ուղղութեան առաջնորդարանին կից նոր դպրոցի բակը: Այս ուրախ առիթով, Սրբազան Հայրը հանդէս եկաւ օրինութեան պարգամով եւ ամփոփ րեդեկութիւն րուաւ դպրոցի վերաբացման կապակցութեամբ՝ յիշելով, որ 10950 օրեր Ազգային Դպրոցը փակ մնալէ ետք ահաասիկ այսօր կրկին իր դռները կը բանայ հայ աշակերտութեան դիմաց: Օրինութեան խօսքէն ետք կղերականաց դասը եւ ներկաները միասնաբար «Հայր մեր» Տէրունական աղօթքը կարարեցին, որմէ ետք եւ հասարակապէս ճիշդ ժամը 12.20 հնչեց առաջին զանգը՝ ի նշան դպրոցի վերաբացման:

Այաւ ներկաներու ծափահարութեանց ներքոյ ժապաւնը կրորուեցաւ, եւ ներկաները դպրոցը այցելեցին եւ դիպրեցին ամէն կարգադրութիւններով սարքաւորուած դասարանները:

Թող եկեղեցանուէր եւ ազգօգուտ ամիթներ անպակաս ըլլան մեր գաղութին: Թող Աստուած բարգաւաճ պահէ մեր ազգը. ամէն:

ԱՐԱՍ ՍՐԿ. ԲԷԹԷՆՃԵԱՆ
Առաջնորդարան Իրաքի հայոց